

ՅԵ. ՏԱՐԱՒՈՎՍԿԱՅԱ  
Կազմեց 2. Սառիկյանց

# ԵԼԵՔՏՐԱԿԱՆ ՀԱԿԸ



ՅԵՐԵՎԱՆ ԴԵՏՐԱՏ 1928

ՀԱՅՊՈՒԼԻԳՐԱՅԻ 2 ՐԴ ՏՊ.

ԳՐԱՌԵՊ. № 557 Բ.

ՊԵՏՏՐԱՏ № 687

ՏԻՐԱԺ 4000

ՊԱՏՎԵՐ № 1893

A 8389


# ԵԼԵՔՏՐԱԿԱՆ ՀԱՎԸ

I



Ա. գյուղում ամենքն են ճանաչում Համբոյին: Ութ տարի յե, ինչ վերադարձել ե գերմանական գերությունից: Առողջ եր և ուժեղ, յերբ թագավորի հրամանով պատերազմ տարան նրան: Ռ՛ւր ասես, վոր չընկավ, ի՞նչ ասես, վոր չտեսավ խեղճը, ինչքան կռիվներում ասես, վոր չեղավ: Քանի քանի անգամ վիրավորվեց: Ամեն անգամ ել բժշկում ու նորից կռվի դաշտ եյին ուղարկում:

Մի անգամ ել վոտից ծանր վիրավորվեց, ու գերի ընկավ գերմանացոց ձեռքը: Գերմանացիք նրա



Չարդված վոտը կտրեցին, նոր փայտե վոտ դրին տեղը և ուղարկեցին աշխատելու մի թռչնաբուծական տրնտեսուկթյան մեջ: Այնտեղ հազարներով հավեր, սագեր ու բադեր էյին պահում:

Պատերազմը վերջացավ, նախկին թշնամիները հաշտվեցին, գերիներն ազատվեցին: Համբոն ել տուն վերադարձավ: Նա այլ ևս նախկին ասլան Համբոն չեր: Թռչուններ եր պահում ու նրանով ապրում:

Ամեն անգամ, յերբ իր փայտե վոտը թրխկացնելով ու կաղալով Համբոն յերևում եր գեղամիջում կամ դաշտում—իսկույն մեծ ու փոքր նրան շրջապատում էյին ու լսում նրա հետաքրքիր պատմությունները կովի դաշտից, գերուկթյունից, տեսած-լսա-

ծից: Համբոն շատ եր սիրում մանա-  
վանդ յերիտասարդներին, վորոնք նրան  
Քեռի Համբո կամ ուղղակի քեռի  
եյին կանչում: Հաճախ կտեսնեյիք  
Քեռուն՝ մի ծառի տակ կամ մարա-  
զի կտերը նստած, չորս կողմը յե-  
րեխաներ: Կարծես ուսուցիչ ու աշա-  
կերտներ լինեյին: Ինչ հարցեր ասես,  
վոր յերեխաները չեյին թափում նրա  
գլխին: Համբերութ յամբ լսում եր Քե-  
ռին, ու յերբեմն ել լուրջ դեմք ըն-  
դունելով, յերբեմն ել բարի ժպիտով  
պատասխաններ եր տալիս կամ պատ-  
մում, կատակներ անում: Պատմելիս  
ել մեկ-մեկ շիբուխին եր զոռ տալիս:

11

Մի կիրակի որ ել Համոն, Սաթի-  
կը, Նազիկը, Աղավարդը, Սուրիկն ու

Աշոտը—բոլորն ել 8—10 տարեկան  
դպրոցականներ, մի-մի ծաղիկ ձեռք-  
ներն առած մոշի եյին գնում, վոր  
համ մոշ ուտեն, համ ել տնեցոց հա-  
մար բերեն: Գնում եյին բարձրա-  
ձայն խոսելով, ծիծաղելով, իրար հըր-  
հրելով, կատակներ անելով:

Գյուղից նոր եյին դուրս յեկել,  
մին ել ի՞նչ տեսնեն.—Քեռին մեծ  
պոպոքենու տակ մենակ նստած, չի-  
բուխն ե պատրաստում: Աղավարդն  
առաջինը տեսավ:

— Ընկերներ, այ Քեռին պոպոքե-  
նու տակ մենակ նստած ա: Եկեք մո-  
շի գնալը թողնենք. եզուց ել կգնանք:  
Գնանք, խնդրենք, թող իր տեսած  
լավ-լավ բաներիցը պատմի: Համա-  
ձայն եք:

— Համաձայն ենք, համաձայն. ա-

ասացին բոլորն ու դեպի պոպոքենին  
վազեցին: Միայն Սաթիկը մի քիչ չեմ  
ու չում արավ, բայց նա յել ընկեր-  
ներին միացավ: Նա շատ եր ուզում  
մոշ ուտել:

— Բարի աջողում, Քեռի Համբո,  
ասացին յերեխաները՝ նրան շրջապա-  
տելով, եկել յենք, վոր մեզ մի բան  
պատմես, քու տեսած են լավ ու հե-  
տաքրքիր բաներից:

— Այ, սատանի ճուտեր, եստեղ  
ել ձեր ձեռիցը չպրծա՞ն ասաց նա՝  
ժպտալով ու փայտե վոտն ուղղելով:  
Ասենք լավ արիք, վոր յեկաք. եսոր  
սիրտս մի քիչ տխուր ա: Դեհ, նստո-  
տեցեք ու ասացեք, թե ի՞նչ եք ու-  
զում:

— Քեռի, ասաց Նազիկը ճիշտ մի  
վոր դու ելեքտրական հավ ունես,

վոր թուխս ե նստում, ճուտիկներ  
հանում. ինքն ել վոչ կուտ ա ուտում  
վոչ ել ման ա գալիս:

— Ըհր, եդ ո՞վ ասեց ձեզ, հարց-  
րեց Համբոն, վորտեղից իմացաք:

— Երեկ մեր վարժուհի ընկեր Սիր-  
վարդն ասեց: Խոստացել ա, վոր մեզ  
ել մի որ բերի ձեր տուն, ցույց տա:

— Ի հարկե ճիշտ ա, պարծենա-  
լով վրա բերեց Համբոն. բա հո վար-  
ժուհին սուտ չի ասել: Ի՞նչ ա. ուզում  
եք, վոր դրա մասին պատմեմ:

— Հա, հա, Քեռի ջան, եդ շատ  
հետաքրքիր ա. մի պատմի տեսնենք,  
ի՞նչ հրաշք հավ ա. վորտեղից ես բե-  
րել, համարյա միասին ասացին յե-  
րեխաներն ու ավելի մոտեցան Քե-  
ռուն:

— Լավ, վոր ուզում եք, խալթներդ



չեմ կոտորիլ, միայն լավ լսեցեք ու  
միտներդ պահեցեք:

III

Համբոն այսպես սկսեց.

— Մի ասեցեք տեսնեմ— ձեր նա-  
նը, վոր թուխս ա դնում, քանի՞ ձու  
ա տակն անում, վորրդ գիտեք:

— Տասնըհինգ, քսան— իսկույն վրա  
բերեց կարմրաթուշիկ Նազիկը:

— Լավ իմացար. ասաց Համբոն:  
Իմ հավի լավությունը նրանումն ա,  
վոր միանգամից 150—200 ձվի վրա  
յա նստում:

— Պա՛... զարմացած բացականչե-  
ցին յերեսեքը, ետ վո՞նց կլի, Քեռի,  
եդ տեսակ ել հավ կլի՞:

— Չա՛ն... ձայնը յերկարացնելով  
պատասխանեց Քեռին՝ չիբուխը քա-  
շելով. ուսումն եղպես տղա յա: Հի-

մի մի բան ել հարցնեմ. ձեր հավերքը  
տարին քանի՞ անգամ են թուխս գա-  
լիս և յէրը, տարվա վո՞ր յեղանակին:

— Տարին յերկու անգամ — գար-  
նանն ու ամառը. ասաց Համոն:

— Մենք մի հավ ունենք, վրա բե-  
րեց Սաթիկը, վոր տարին յերեք ան-  
գամ ա թուխս գալիս: Ինչքան ուզե-  
ցին, իմ նանը չծախեց:

— Ճիշտ եք ասում, ասաց Համ-  
բոն. միայն թե Սաթիկի ասածը հա-  
զարից մի անգամ կպատահի: Իսկ իմ  
հավը տարին 12 ամիս թուխս ա նրս-  
տում. միայն թե ձու հասցրու՝ թե  
դոշաղ ես:

— Պահ, դրա տունը չքանդվի. եղ  
ի՞նչ հրաշք հավ ա, զարմացած ու  
ծափ տալով ասացին յերեխաները:

— Հրաշք ա, բա հրաշք չի՞: Ձեր

հավր, վոր ըսկի չլի, մի յերկու ձու  
եւ ա լակ կանի. իմը՝ վոչ մեկը: Ձեր  
հավր շատ անգամ վոչլոտում, ճու-  
տիկներին եւ վոչլոտացնում ա. իմը  
ետպես բաներ չունի. հայելու պես  
եւ մաքուր ա: Դե, ասացեք— ո՞ւմ հա՞մն  
ա լավ, իմը, թե՞ ձերը:

—Քունը, քունը, Քեռի, մերն ի՞նչ  
ա վոր. ասաց Սաթիկը. միայն են  
առա, քու հա՞մն եւ թևեր, վոտեր ունի՞,  
թուչո՞ւմ, մա՞ն ա գալիս:

Քեռին ծիծաղեց: Ձեռը դրավ Սա-  
թիկի ուսին ու ասաց.

—Ձե, բալիկս. բայց առաջ դու  
են առա — ելեքտրականության մասին  
բան լսե՞լ եք:

—Վոնց չե, Քեռի ջան, լսել ենք.  
համարյա միասին գլխով արին ու  
ասացին յերեխեքը: Ընկ. Անդրանիկը

հենց յերկու որ առաջ ա պատմել:

— Եդ լավ ա, վոր լսել եք: Հունարն հենց եդ ելեքտրականության մեջ ա: Իմ հավը վոր կա, մի արկղ ա. մեջն ել լամպիկներ: Վոչ թե ունի, վոչ վոտ, վոչ թռչում ա, վոչ ման ա գալիս. վորտեղ դնես, ենտեղ ել կմնա: 150—200 ձուն կարգով շարում եմ մեջը. հետո ելեքտրականությունը թելերի միջով գալիս, եդ լամպիկները վառում ա, ձվերը տաքացնում ա:

— Քեռի, շտապեց Համոն, բա ձրվերն եփում չե՞ն:

— Ի՞նչ ես ասում դու յել, ընդհատեց նրան Աշոտը. ձուն վոր եփի, ել նրա միջից ճուտ դուրս կգա՞:

— Իմ ասածն ել հենց ետ ա ե, բա վոր լամպ են վառում, ձուն եփել չի՞:

— Կռիվ միք անիլ, երեխեք. ժամանակին մեջ մտավ Համբոն, եղ արկղը շինողը հիմար չի յեղել: Նա արկղին ենպես ա շինել, վոր հենց վոր ողը հարկավոր չափով տաքանում ա, լամպիկները հանգչում են: Հենց վոր մի քիչ սառչում ա, ելի վառվում են: Մի խոսքով՝ ողը մի դարարի ա մընում:

— Պահ. քու տղիս տղա. եղ տեսակ ել արմանք բան. դարմացած հարցրեց Աղավարդը: Ուրեմն եղտեղ մարդ ել հարկավոր չի:

— Ձե, ձեզ մատաղ, յես ել իմ գործն ունեմ: Յես ել շուտ-շուտ ձրվերն եմ շուռտի շուռտի անում, վոր ամեն կողմից հավասար տաքանան, արկղն եմ մաքրում:



— Քեռի ջան, քեռի, մի ասա տես-  
նենք, ասաց Նազիկը, քու հավը ձը-  
վերի վրա ի՞նչքան ա նստում: Հենց  
մի որ նստելն ու ճուտիկներ հանելը  
մեկ ա լինում: Դրանից հետո յեւ քո  
ճուտիկներին ո՞վ ա պահում, ման  
ածում:

— Հա, հա, Քեռի, եղ շատ հետա-  
քրքիր ա. ամեն կողմից ձայն տվին  
յերեսեքք:

Այ, եղ մի բանում յես փաս եմ,  
ձեռը բարձրացնելով ու չիբխին զոռ  
տալով ասաց Համբոն: Իմ հավն ել ա  
ուղիղ 21 որ նստում, դա բնության  
դիրք ա, վոչ ով չի փոխիլ: Զուն ու-  
ղիղ 21 որ մնում ա արկղում պառ-  
կած: Ճուտիկները վոր դուրս են գա-  
լիս, տեսած կլեք, թաց են լինում,

դնում եմ չորանոցում. ցամաքում են.  
դրանից հետո մայրատունն եմ տա-  
նում: Մայրատունը յերեք սենյակ  
ունի: Առաջին սենյակում ելեքտրա-  
կան վառարան կա, վոր չմըսեն. յերկ-  
րորդում նրանք ման են գալիս. դրա  
կտուրը շուշով ա ծածկած. յերրորդն  
ել մի փոքրիկ բակ ա, յերկաթալար-  
ով պատած: Ես մայրատանը նրանք  
ապրում ու կերակրվում են ամբողջ  
6—8 շաբաթ, մինչև վոր կարգին  
«փառաշանում» ճուտեր են դառնում:  
Այ, այսպես ա իմ հավր: Նրան ասում  
են ինկուբատոր: Դուք ել վոր մեծա-  
նաք, աշխատեցեք ընկերություններ,  
արտելներ կազմել ու ինկուբատոր-  
ներ բերել տալ, դա շատ ոգուտ բան  
ա: Ինչ վոր չիմանաք, թե կենդանի  
լինեմ, ձեզ ցույց կտամ: Իսկ այժմ



խնդրեցեք ձեր վարժուհուն, վոր ձեզ  
բերի մեր տուն, յես ամեն բան ձեզ  
ցույց կտամ:

Խոսքը վերջացրեց Համբոն ու  
վեր կենալ պատրաստվեց: Յերեխեքն  
եւ զարմացած ու գոհ սրտով, շնոր-  
հակալություն հայտնեցին Քեռուն  
ու ծղիկներն առած, վորը նորից մո-  
շի պնաց, վորն եւ դեպի տուն:

A  
I  
8389



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0045225

[054.]

A  $\frac{1}{8389}$

ԳԻՆՆ Ե ԶՕԿՈՊ.



Լույս Ե տեսնուժ Սոցիալական Դաստիարակութեան  
Գլխավոր Վարչութեան կից գործող Մանկական Գրա-  
կանութեան Հանձնաժողովի հաժանութեամբ: